

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Բ.

Մեր նախորդ խմբագրականով, իր ընդհանուր գիծերուն մէջ, տուինք Հայ Երուսաղէմի երկու պատերազմներու միջև սկսուած և յառաջ տարուած կրօնական, կրթական և տնտեսական զործունէութեան իրազործումները, որոնք աւելի քան զոնացուցիչ էին:

Կրօնական և մշակութային այդ արդիւնքը՝ վանական հաստատութեան մը պարիսպէն ներս իրազործուած, ինքնայատուկ պարագայ մըն է, թէև ինքզինքին հետ հաշտ, բայց քիչ հազորդ Հայ Սփիւռքի ամբողջականութեան, հեռուէ հեռու միայն կցորդ անոր հոգեկան ու մտաւոր ապրումներուն:

Ազգային արժէքներուն հաւատարիմ մնալ, անոնց գիտակցութիւնը ունենալ և մշակուածը հանրացնել, տարբեր աշխատանքներ են: Մտածումի, զգացումի և կամեցողութեան ինքնուրոյն այդ կերպերը կը կարօտին հայ գրագէտի, դիտունի, արուեստագէտի և քաղաքագէտի զործունէութեան, կարենալ տուեալ ժամանակի մէջ ստեղծելու համար ոգին որ մերը ըլլայ:

Հայ զաղթաշխարհը, իր ֆիզիքական տարանջատումներու պատկերով և հոգեկան նուազումներով ի վիճակի չեղաւ տակաւին ստեղծելու այս բոլորը ոգևորող և նպատակաւորող աշխարհահայեացքը՝ անանուն, բայց իրական, զոր դժուար է որակել: Կուսակցութիւնները, յարանուանութիւնները, անհատապաշտ ձգտումները և անոնց իրարու նկատմամբ ունեցած անհանդուրժող և անգիշող ոգին անշուշտ դեր մը ունին, սակայն ստեղծիչը չեն անոր: Այս բոլորէն վեր, տիրաբար իշխող համազգային գիտակցութիւն մը կարելի չեղաւ ցարդ մշակել Հայ Սփիւռքի մէջ: Հայութեան այդ պատրաստութեան մէջ Եկեղեցին, դպրոցներ և կուսակցութիւններ առանձնաբար, իրենց ոյժերուն ներած չափով, կը ջանան պայծառացնել այդ գիտակցութիւնը և արմատացնել զայն: Սակայն ցարդ համազործ և ծրագրուած աշխատանք մը տարուած չէ: Ընդհակառակն, զիրար արգիլող և ձախողանքի մատնող տրամադրութիւններ և զործունէութիւններ կը թուին աւելցած:

Սփիւռքի հայ ժողովուրդը տակաւ կը կորսնցնէ խոշոր չափերով հայ ոգին յատկանիշերը: Տարբեր ազգութիւններու և մշակոյթներու մաշումին ենթակայ, ան կարծես թէ դադրած է դարաւոր մշակութային կեանքի տէր ժողովուրդի մը համաբաւին հաւատարիմ ըլլալէ: Այս հանգամանքին արդիւնքն է թերևս որ այսօր դէպքերը կը վարեն մեր ճակատագիրը, բայց էր երբեմն երբ

մենք մեր կեանքը կը շինէինք դէպքերու ազդեցութիւններէն վեր իմաստուն-
թեամբ մը և մղումներով:

Իրողությունն է թէ Հայ գաղթաշխատոր գրուած է իրական տաղնապի մը առջին, Եթէ Սփիւռքի մէջ անձնիւր հայ դառնայ իր պատկանած երկրի քաղաքացի, իր զաւակներուն տոյ միայն այդ երկրի դաստիարակութիւնը, ապրի նոյն աշխարհամասի քաղաքական կեանքով և մշակութով, բոլոր դժուարութիւնները կը հարթուին, բայց կը չբռնայ նաև հայութիւնը: Սակայն անհատաբար միայն մարդիկ կրնան այսկերպ խորհիլ, և որքան տկարանայ ազգային դիտակցութիւնը, նոյն համեմատութեամբ կը շատնայ այսկերպ մտածող անհատներու թիւը:

Եւր մտածենք թէ Սփիւռքի հայութիւնը պանդուխտ է և իր գոյութիւնը առժամայէ, մինչև որ բացուին իրաւունքի և արդարութեան դուռները, այն ատեն մենք կը փրկուինք, որոշ չափերով, համակերպութեան մղձաւանջէն և Սփիւռքը կ'ազդող զաղութներուն մէջ ի զործ զրուած ճիգերը իրենց նպատակին կը հասնին: Երբ մեր հոգիներէն բացակայի այս հիմնականը, արտասահմանի մէջ ապրողները կը բաւարարուին տեղական կարիքներու աօրեայով և հետզհետէ կ'աղտոտի ապագայի հաւատքը:

Մեր մեծ աղէտէն ետքը, տեհիլքով մը շարունակեցինք ապրիլ, և սակայն վաթսուէն տարի է կը տատանինք օտար ակերտ վրայ: Պատկերը խորտակուած մեր ժողովուրդին: Մինչև երէկ, Սփիւռքի ամբողջ տարածքին վրայ իտակալին կարօտն ունէինք մեր անցեալին, մեր լեզուին, մեր Եկեղեցիին, մեր աւանգութիւններուն և սրբութիւններուն, հայութեան: Տակաւին մինչև երէկ կ'երգեալէնք մեզի պարտադրուած Բաբելոնին մէջ, նման անոնց՝ որոնք երգուընցան Քառ զետս Բաբելաղւոցոց Հմոռնալու իրենց անցեալը, իրենց հողը, և այն բոլոր արժէքները որ ցեղինն էին: Երգումը հաւատք մըն է: Մինչև երէկ հաւատք ունէինք հայ ժողովուրդի ոգեկան դիմադրականութեան մասին: Իսկ այսօր, տխուր է պատասխանը:

[illegible]

✓ Ունինք տակաւին բարոյախօսներ, որոնք կը բացատրեն թէ յիմարու-

թիւն և բարբարոսութիւն է տառապիլ, թէ տառապանքը կ'եղծէ նկարագիրը, կը չլատէ ոյժերը, հետևաբար ինչո՞ւ քաջալերել մեր ժողովուրդը որ հայ մնայ, ի գին անհնարին զոհողութիւններու և տառապանքներու: Աւագ, ուր իշած է մեր ժողովուրդի բարոյականը: Դարաւոր մեր խաչելութեան ճամբուն վրայ չզոհեցինք մեր լեզուն, մեր նկեղեցին, մեր սրբազան աւանդութիւնները, ուրոք պաշտպան սուրբերը եղան մեր կեանքին: Որովհետև մեզի պարտադրուած տառապանքը փոխանակ տկարացնելու՝ զօրացուց մեզ: Տառապանքն ու մահը ոչ միայն կը զեղեցկացնեն հոգին, այլև կու տան աւելի զեղեցիկ և և մը կեանքին: Մեծ և հզօր է հոգին երբ գիտէ կենալ բարձունքներու վրայ, անկէ դիտելու անհուն խորհուրդը տիեզերքին, ժամանակին և կեանքին, իր բոլոր երաններուն վրայ:

Հելլենական դիցաբանութենէն դրուագ մը թելադրական է: Չաստուածունի 'Իեմետրին կը յանձնուի թագաւորի մը աղջնակը որ զայն կրթէ և աստուածային կատարելութեան բարձրացնէ: Չաստուածունին կը փակէ թագաւորին դուռը սենեակի մը մէջ և կ'աշխատի ի գործ դնել աստուածային մանկատաժութեան մեթոտները: Հարագատ մայրը աղջնակին կ'օգէ գիտնալ թէ ինչպէ՞ս կը դաստիարակուի իր գաւալը: Դրան ճեղքէն կը նայի և կը տեսնէ որ 'Իեմետրէ շաստուածունին կը դարձնէ մերկացած աղջիկը կրակին դէմ, խորոված դորձներու պէս: և դեռ նման աւրիշ շարչարանքներ, աստուածութեան կարգ և անմահութիւն պարգեւելու համար իշխանութիւն: Մեր ժողովուրդը չէ մեռած, մեռած ըլլալու համար: Տառապած է, որովհետև հաւատացած է թէ տառապանքը մեծութեան և կատարելութեան կը բարձրացնէ մահկանացուները: Նախընտրած է տառապիլ բարոյական մտապատկերներուն առջև, քան ընդամանալ նիւթական զոհողութիւններուն մէջ: Իր կեանքը գինն է եղած այս մեծ և սրբազան իրազրոյթն:

✓ Պէտք է վերջ դնել ամերիկացիներին, որ տառապանքին և տոկալու ճիգին կը հակադրէ դուարձութիւնը: Պէտք է ուխտել հաւատարիմ մնալ հայ ժողովուրդի յաւիտենական պայքարին, ուխտաւորի մը նման քալելու մեր ժողովուրդի դիմադրականութեան ճամբայէն, արիւնքոտ ոտքերով և զալիք վազուրդայններու երազով և հաւատքով:

Հայ ժողովուրդի դիմադրականութեան ոգին ի յայտ եկաւ նախ իր գիւրերու գիւտով, որ զօրավիգ հանդիսացաւ մեր գոյութեան, քանդելով մեր վրայ նետուած օտար կամուրջները, մեր հոգիին շղթաները: Նման դիւցազններգութիւն մը տեղի կ'ունենար շուրջիւ վանքերուն, որ դիմադրական պատուարներ կազմած կը ջանային վառ պահել դիմադրական ոգին, պահպանել ազգային սրբութիւնները: Երբ անաւոր աւերածէն յետոյ հեռանալով թշնամին երկրէն, ազգային այդ ոգին դուրս կ'ելլէր վանքերէն, վերակազմելու քանդուածը: Վանքերու այս ճակատամարտին կը պարտինք ինչ որ այսօր գիտենք մեր անցեալէն:

Ներկայիս ինչպէ՞ս կրնանք մշակել և զարգացնել մեր այդ ոգին: Այս հարցն է որ կը մտահոգէ մեզ, մեր լինել թէ չլինելու ճամբուն վրայ: Դիւրերու և վանքերու ճակատամարտներէն վերջ կայ ամենէն ճղատամայինը, Հայ հո-

գլխին ճակատաժարումը: Ժակատագրական այս շրջանին, որ կր կազմէ մեր դժբախտ ներկան, ոգին է մեր միակ ապաւենը, հայութեան ոգին՝ որուն կառչած պէտք է մնանք պաշտպանելու մեր գոյութիւնը յամառօրէն: Պէտք է ուխտենք ապրիլ և տոկալ, պահանջելու յաւերժութեան մեր իրաւունքը, ինչպէս երէկ՝ այնպէս ու այսօր, վասնզի մշակոյթ ունինք, արուեստ ունինք, քաղաքակրթութիւն ունինք, ստեղծագործ ժողովուրդ ենք: Մենք անպտուղ ծառ չենք, որ պատմութիւնը կտրէ ու նետէ:

Այս երզը զոր պիտի երգեն մեր զգինուորեալ մանուկները: Այս երզով պիտի կռուինք, Մեր գերագոյն հրամանատարը հայ հոգին է, որ կենդանութիւն պիտի պարգեւէ մեր ոգորումներուն և գործունէութեանը: Հող չունինք մեր ոտքերուն տակ, զրկուած ենք ազգային անկախ կեանքի մը պայմաններէն արտասահմանի մէջ: Պէտք է տոկալ զօրակոչի կանչելով հայութեան ոյժերը և արժէքները: Ֆիմագրական արժէք է լեզուն, Եկեղեցին, զրականութիւնը, բայց մանաւանդ մեր այժմու հայրենիքը, մեր պատմական հողերու մէկ մասին վրայ: Սովետական մեր Հայաստանը պիտի դարձանէ նահանջականութիւնը, յուսահաւ տութիւնը Սփիւռքի հայութեան, պիտի խանդավառէ մեզ իր կրակով որ տոկանք:

Տաղանդաւոր ժողովուրդ մըն է հայ ժողովուրդը: Ստեղծագործ և իր մշակոյթով հպարտ: Պէտք է պահպանել այս ժողովուրդին գոյութիւնը: Դարերու թշնամութեան դէմ ծաւացած, յաղթած ու յաղթուած՝ բայց միշտ կենդանի և առողջ: Ոճի գործած պիտի ըլլանք եթէ թողունք որ խամրի, զօսանայ: Հայ ժողովուրդը ֆիլթրի նիւթ չէ, ինչպէս են կիսամշակ ժողովուրդները: Անկախ անցեալ մը ունի մշակոյթ ունի, քաղաքակրթութիւն ունի, իր սրբազան ուխտատեղիները ունի որոնք յաւերժութեան կը նային:

Պէտք է քալենք Սփիւռքի մշուշներէն, ոտքի կոխան ընելով շղարհն անհուն սուգերուն: Տակաւին կոտորելով ալիքները մեր լքումի պահերուն: Մառախուղի ընդերքէն դարձեալ ասուպ առ ասուպ պիտի շինուի կապոյտ լոյսը մեր հայրերու Աստուծոյն:

Լեռն է հոն միշտ սրբազան, նման մեր հայրերու հոգիին, յաւերժական, անսասան: Պէտք է քալենք ճամբայէն յոսին ու մեր դարաւոր երազին, աստուածներուն՝ որ դողցան կաթը երկնքի բովոյթէն: Եւ կամ նման քաջերուն մեր ցեղի անմեռ հէթիաթին, խորն ընդերքին սուրբ լեռան, շղթան իրենց կրծելով կարօտն անմար որ կ'այրի ինչպէս անկէզ ժորենին:

(Նարունակելի՝ 2)

Ե.